

սակայն—աւանդ—ուժերի յարատե հաւասարակշութիւն երբէք չենք գտնում. արտաքին ազդակները անդուլ շարունակում են իրանց համայնաւեր ազդեցութիւնները և վերջիվերջոյ կազմալուծում են ամենակատարեալ, ամենահոյակապ օրդանիզմն անգամ—լինի դա մի աստղ կամ մի արեգակ, մի կենդանի մարմին, մի քաղաքական, հասարակական կազմակերպութիւն...

Այդ էլ միւս օրէնքն է, հակամարտ օրէնքը՝ նոյնպէս երկաթէ, տիեզերական—դիստոլիցիայի, քայլայման օրէնքը...

Միք. Յովհաննիսեան

(Կը շարունակուի)

ԲԻՐՄԱՆԻԱՑԻ ՀԱՅԵՐԻ ՇՆՏԵԸԼԻՑ ԵՒ ՆԵՐԿԸՑԻՑ¹⁾

Բրմահայերի անցեալից միայն հետևեալ տեղեկութիւններն եմ կարողացել ձեռք բերել. սրանց մի մասը (J. Crawford) Զ. Կրաֆըրդ²⁾ անունով մի անգիտացի պատգամաւորի օրագրութիւնից եմ քաղել, իսկ միւս մասը ներկայումս ծերերից եմ լսել:

Յիշեալ պատգամաւորի օրագրութեան մէջ, ի միջի այլոց յիշուած են հետևեալները. Պ. Սարգիս Մանուկ անունով մի հայ հաւատարիմ և մեծ ծառայութիւն էր արել իրանց՝ պատգամաւորութեան առթիւ: Գրում է, որ սա չորս հարիւր հազար տուփից աւելի պահանջ ունէր Բրմայ կառավարութիւնից. մերձ 22, 000 ուռփիի արժողութեամբ ընծաներ և նուէրներ է բաժանել թագաւորին և նրա պաշտօնեաններին. բայց էլի չի վստահանում եղել իր պահանջի համար հարցնել: Յիշում է նաև թէ մի հայի տուն էին մտել կարմիր յակինթ (եաղութ) տեսնելու. պատմում է թէ մասն տեսակներից քանի հատ գնեցին. իսկ երբ մեծ տեսակների համար էին հարցըել, նոյն հայը հսդիկ

1) 1904 թ. «Մուլճ»-ում № 9 տպուած էր «Հայերի Բրմաստան գաղթելը»:

2) J. Crawford անունով յիշեալ պատգամաւորը 1826 թուին Անլդ. կապավորութիւնից ուղարկուել է Բրմայ թագաւորի հետ գալնք կապելու Ավա մայրաքաղաքում (Բրմաստանի): Յիշեալ պատգամաւորը իր պաշտօնը կատարում է և օրագրութեան ձեռվ պատմում է Բրմաստանում տեսածները:

լեզուով ասել էր թէ ունէր մի քանի հատ շատ թանկագիններից միայն թէ չէր կարող այստեղ իրենց ցոյց տալ. (քանզի եթէ որևէ յակինթ հինգ վիս¹⁾ արծաթից աւելի գին բերէր, այն քարը նկատում էր Բրմայ թագաւորի ստացուածքը. հետևաբար թագաւորն եթէ իմանար, բռնութեամբ կը տիրէր և ունեցողին էլ ծանր տուգանքի կ'ենթարկէր) ուստի խոստացել էր բերել Ռանգում և այսեղ վաճառել: Նաև յիշում է թէ, մի օր Բրմայ իշխանները երբ վիճում են եղել մի խելօք հայի հետ, հարցրել են թէ, «կարո՞՞ղ է անդիմացին երկաթը արծաթի փոխել». Նոյն հայը որ երկար տարիներ նրանց հետ ապրել էր և կատարելապէս ծանօթ էր նրանց լեզուին, պատասխանել էր թէ անդիմացին գիտէ այն արհեստը կատարեալ կերպով, բայց ոչ այն մտքով, որով իրանց հարցի միտքն էր. գրաբանիցը մի զմելի (անդիմացու շինած) հանում է և մօտները սեղանի վրայ է ձըգում և ասում է թէ այն աւելի արժէր, քան նոյն զմելու կշռով արծաթը: Նոյն պատգամաւորն յիշում է, որ Բրմայ թագաւորին տեսնելու ժամանակ մի քաջ անդիմագէտ և բրմայագէտ հայ կար:

Նաև յիշում է թէ Վերին Բրմաստանում (Մանդլէից նաւակով երեք ժամուայ ճանապարհ հեռու) տասը մղոնից աւելի ընդարձակութեամբ տեղ, մի Բրմայ թագաւոր յանձնած է եղել հայերին լեղակ ցանելու, ուր մի խելօք հայ վաճառական մեծ գործարաններ է ունեցել, որոնց աւերակները մինչև օրս դեռ կենում են: Էլ յայտնի չէ թէ ի՞նչ է եղել վախճանը, քանզի չկայ ուրիշ ծանօթութիւն:

Այսքանս վերոյիշեալ օրագրութիւնից:

Պատմում են Ռանգունայ Բրմայ կառավարութեան ժամանակ, Ռանգունում Յակոբ անունով մի հարուստ հայ է եղել, որ իր հարստութիւնը՝ ոսկի և արծաթ՝ իր տան հողի տակ թագցրած է եղել. յանկարծ մի թշնամի այս գաղտնիքը լսելով կառավարութեանը լուր է տալիս: Բրմայ թագաւորն իսկոյն բըռնում է Յակոբին, կապել տալիս և գանակոծում մինչև թագցըրած հարստութիւնը ցոյց է տալիս, որին տիրում է թագաւորը, խեղճութեան մէջ թողնելով զրկուածին: Նաև պատմում է թէ Յովհաննէս անունո՞վ թէ ազգանունով, մի հարուստ հայ՝ Ռանգունում Բրմայ ապօրինի կնոջից զաւակ է ունենում, Նոյն ժամանակուայ մեր քահանային առաջարկում է մկրտել երեխին, բայց մերժողական պատասխան է գտնում. դիմում է

1) Վիսը մերձ մի քառորդ լիար է Պարսկաստանի կշռով:

կաթոլիկներին. որտեղ մկրտում են երեխին, որից յետոյ նա կաթոլիկների եկեղեցին է երթում և իր հարստութիւնից քանի հազար ոռովի նուիրում է նրանց եկեղեցու շինութեանը, որոյ նուիրատութեան համար, ինչպէս պատմում են, պղնձի թէ քարի վրայ արձանագրութիւն դեռ մինչև օրս կայ տեղույս կաթոլիկաց եկեղեցում: Լամձներից էլ այօքան:

Վերոյիշեալ թէ գրաւոր և թէ բերանացի տեղեկութիւններից երևում է, որ հայերը Բրմաստանում անցեալ երկու դարում էլ թէ հարուստ և թէ պատւաւոր դիրք են ունեցել. միայն թէ Բրմայ կառավարութեան բարբարոս բռնութիւնների ենթակայ են եղել, որոյ պատճառաւ էլ շատ հաւանականէ, որ աղքային կամ կրօնական հաստատութիւններ չեն վստահանում եղել շինելու, որպէսզի կառավարութեան ուշադրութիւնը իրենց հարուստ լինելու վրայ չհրաւիրուէր¹⁾. որովհետև բացի վեր, վէզիր Գրիգորի շինած եկեղեցուց՝ ուրիշ մեր կրօնական կամ աղքային հաստատութեան համար չենք կարողանում ստուգել, թէ արդեօք եղել են կամ ոչ:

Այսօր մերձ (350) երեք հարիւր յիսուն շունչ հայ կը գտնուի Բրմաստանայ հետևեալ քաղաքներում և գիւղաքաղաքներում. Ռանգուն, Մանդլէ, Տանգու, Մէջիօմ, Պիգու, Եամեղին, Պինմինա, Մէկթիլա, Շուէրօ, Թազի, Պիանգալնգ և ուրիշ գիւղաքաղաքներում:

Ռանգուն ներկայ մայրաքաղաքն է Բրմաստանայ, (ուր կենում է անգլիական ընդհանուր Բրմաստանայ կուսական, որ միշտ ուղարկում է Հնդկաստանի փոխարքայից) վերջի քանի տասնեակ տարիներից սկսեալ, մի վաճառաշահ քաղաք է եղել. որոյ իսկ պատճառաւ, հայերի մեծամասնութիւնը այստեղ են հաստատուած թուով մերձ երկու հարիւր և յիսուն շունչ: Ուսեն մի եկեղեցի սուրբ Յովհաննու Մկրտիչ անունով, 2) ուր քահանայագործում է մի վիճակաւոր քահանայ Նոր-

1) Մանգլէի ներկայ եկեղեցին թէև Բրմայ կառավարութեան ժամանակում է կառուցուել, սակայն որպէս պատմում են, վերջին Բազարների ժամանակում է շինուել, այն էլ հանգանակութեամբ. միենոյն ժամանակ էլ այս թագաւորները փոքր իշտաէ քաղաքակրթուած էին Անգլիայի հետ շփուելով:

2) Սոյն եկեղեցին կառուցուել է 1859-ից 1863-ի յունուար ամսկ սկիզբը. 1851-ից Ռանգունանայ հայերը զրկուած են եղիկ թէ եկեղեցից և թէ հոգիու միիթարութիւնից. մինչև 1857-ի սկիզբները, երբ գեր. Պողոս. վարդապետ Արշակունեաց Բալայ անունով, գալիս է նուիրակ թէ քարոզապետ Ռանգունանայ հայերը ինքըում են յիշեալ ծայր. վարդապետից, զատկական աւագ տօներին ժամասացութիւն են ունենում, մի հայի առն մի անենեակում, առանց պատարազի; Նւ իսկոյն մի եղէզնաշն ժամասու են

Զուղայից ուղարկուած Պարսկա—Հնդկաստանի թեմի գերա-
Առաջնորդից, երեք տարի ժամանակաւ Եկեղեցւոյ հարաւային
կողմում շինուած է 1877 թւում քահանայի բնակարանը, որը
շինել է հանգուցեալ պ. Կարապետ Բաղդասարեան իր հօր յի-
շատակին և սոյն շինքի մէջ երկու սենեակներ յատկացրել է.
պահպուխտների առժամանակեայ բնակութեան համար:

Մանդլէ Բրմայ վերջին թագաւորի մայրաքաղաքն էր.
այստեղ հաստատուած են թուով յիսուն շունչ հայ: Ունեն մի
եկեղեցի սուրբ Գրիգոր Լուսաւորչի անունով, ուր քահանայա-
գործում է նոյնակէս Ն. Զուղայից ուղարկուած մի վիճակաւոր
քահանայ ¹⁾: Սոյն եկեղեցին, ինչպէս պատմում են, կառուցուել
է 1863 թուին:

Տանգուում մերձ 17 շունչ հայ կայ, և մնացեալ մերձ 33
շունչը ցրուած են վերոյիշեալ քաղաքներում և գիւղաքաղաքնե-
րում:

Բրմահայը ներկայում գործում է վաճառականութեամբ,
շինութեանց ճարտարապետութեամբ, քաղաքական կառավարու-
թեամ պաշտօններով, փաստաբանութեամբ և գրագիրների
զանազան պաշտօններով: Վաճառականներն են Ռանգունում.
«Բաղդասար և որդի» «Յարութիւն և ընկ.» և «Գասպար և
ընկ.» Մանդլէում. «Վարդանէս և ընկ.» և «Աբգար եղբարք»:
Ռանգունայ նշանաւոր պանդոկն է Strand Hotel, որ պատկա-
նում է «Սարգիս եղբարք»:

Բրմահայը գրեթէ ամբողջովին պատուաւոր դիրք ունի:
Ունի գովելի մի յատկութիւն, այն է, երբ մի օտարա-
կան դրսից գալիս է և գործի համար միջնորդութիւն կամ-

կառուցանում Մըբոյ Աստուածածնայ անունով, քանզի վէզիր Գրիգորի շինուած
եկեղեցին սոյն անունով էր կոչուած: Այդ եկեղեցում յիշեալ ծ. վարդապետը
ժողովրդի խնդրանօք պաշտօնավարում է, մինչև որ ժողովուրդը գրում է
Նոր-Զուղայից իրեն համար վիճակաւոր քահանայ է բերում: Յետոյ ներ-
կայ եկեղեցին կառուցանում են, որոյ շինութիւնը երկարաձգում է զա-
նազան անհամաձայնութեանց պատճառաւ, իսկ անունը կոչում է սուրբ
Յովհաննէս Մկրտիչ, որովհետեւ ինչպէս պատմում են, կառուցման ժամանակ
Պ. Յովհաննէս Ս. Յորդանաննեան անունով մի հայ երեսփոխան է եղել, որ
այն ժամանակուայ մի ազգեցիկ անձն էր, սորա խաթեր համար սուրբ Յովհան-
նէս Մկրտիչ են կոչում, թէս յետոյ սուրբ Յովհաննու Մկրտիչ սուրբ նըշ-
իարից բերում է և մինչեւ օրս պահում է սոյն եկեղեցում:

Մ. Հ. Ք.

1) Մանդլէի հայ ժողովուրդը նիւթականից անկարող լինելով մի քա-
հանայի միիթարերի, անցեաներում քանի ասրիներ քահանայից զուրկ էր,
չորս տարի է, որ Կալկաթայի հայ եկեղեցին սկսեց ոգնել, քահանայի-
ամսաթոշակի յիսուն սուփին ինքը տալով:

Մ. Հ. Ք.

խորհուրդ է հարցնում, պատրաստ է բըմահայը իր բարի խորհուրդներով և միջնորդութիւնով, և շատ անգամ էլ նիւթականով, կատարել իր ազգային բարոյական պարագը։ Սակայն մի այլ կարևոր բան որ պակսում է՝ մեր ազգային լեզուի համար անփոյթ մնալն է։ չունենալով ազգային մի ուսումնարան և ընթերցարան, Քրմաստանայ ապագայ սերունդը գրկուել է ազգային լեզուից և լաւ ապագայ չէ խոստանում...

Համբարձում քահ. Ս. Վարդանեանց

Ա Մ Պ Ը

Ամպ լուսեղէն, ուր երազներս ապրեցան,

— Երկինքին մէջ, լուսնին աշխարհն արծաթի —

Ու քեզի հետ փըշած կիյնան ցիրուցան.

Այդ փըշանքէն տաք-տաք արցունք կը կաթի։

Բաժնուելով քու շողերէդ մըտերիմ,

Հովերուն բիրտ հարուածին տակ կը փըրթիս.

Կեանքդ երկինքն էր. հողը կըլլայ քեզ շիրիմ,

Ուր թաղուեցան հուր տենչանքներն իմ սըրտիս։

Եւ կը ժպտին վերէն արևն ու եթեր

Մեր վիշտերուն անկարեկիր ու անփոյթ,

Փայփայելով թևերնուն մէջ նոր ամպեր,

Նոր սարսուռներ և երազներ ջինջ կապոյտ.

Մինչ մենք զոհեր սիրոյ անհուն պապակին՝

Անձրև կ'ուշաս դուն, ես՝ արցունք ցաւագին։

Սիսիլ